

ՈՎՔԵՐ ԵՆ ԵՎ ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԵԿԵԼ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԸ

ՀԱՄԼԵՏ ԴԱՎԹՅԱՆ

Նախ փորձենք խմբավորել խնդրո վերաբերյալ այն բոլոր կարծիքները, որոնք առկա են հայկական աղբյուրներում, ինչպես նաև դրանց հիման վրա ստեղծված պատմագիտական գրականության մեջ: Այսպիսով՝

- ա) Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը Ճենաստանն է (Մովսես Խորենացի<sup>1</sup>, Փավստոս Բուզանդ<sup>2</sup>, Սեբեոս<sup>3</sup>, Մ. Թումանյան<sup>4</sup>, Ե. Քասունի<sup>5</sup>, Ռ. Պետրոսյան<sup>6</sup>),
- բ) Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը Կովկասում Դերբենդի շրջակայքն է (Վարդան Արևելցի<sup>7</sup>, Հովհան Մամիկոնյան<sup>8</sup>, Ղևոնդ Ալիշան<sup>9</sup>, Գ. Խալաթյան<sup>10</sup>),
- գ) Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը Ճանիքն է՝ Լազիկյան (Բ. Կյուլեսերյան<sup>11</sup>, Ն. Ադոնց<sup>12</sup>, Ն. Ման<sup>13</sup>, Կ. Թումանով<sup>14</sup>, Ռ. Հյուսեն<sup>15</sup>),
- դ) Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը Տայքն է (Լեո<sup>16</sup>, Խ. Բալեկջյան<sup>17</sup>, Ա. Քեշիշյան<sup>18</sup> և ուրիշներ):

<sup>1</sup> Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 269:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 307:

<sup>3</sup> Սեբեոս. Պատմություն, Երևան, 2005, էջ 25:

<sup>4</sup> Մ. Թումանյան. Մի քանի նկատողություններ Մամիկոնեանց գաղթականության մասին. – «Հանդէս Ամսօրեայ», 1911, թիւ 9, էջ 524–525, 527:

<sup>5</sup> Ե. Քասունի. Ճենաց աշխարհ. աշխարհագրական-պատմական հետազոտություն մը. – «Հասկ» Հայագիտական տարեգիրք, Անթիլիաս, 1957, էջ 97–98:

<sup>6</sup> R. Bedrosian. China and the Chinese According to the 5th–13th Century Classical Armenian Sources. – «Armenian Review», 1981, Vol. 34, № 1–133, pp. 17–24.

<sup>7</sup> Վարդան Արևելցի. Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 71–72:

<sup>8</sup> Հովհան Մամիկոնյան. Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 33:

<sup>9</sup> Ղ. Ալիշանը ծանոթագրել է 1862 թ. Վենետիկում հրատարակված Վարդան Արևելցու «Տիեզերական պատմությունը» (տե՛ս Վարդան Արևելցի. նշվ. աշխ., էջ 72):

<sup>10</sup> Գ. Խալաթյան. Ջենոբ Գլախ. Համեմատական ուսումնասիրություն, Վիեննա, 1893, էջ 36:

<sup>11</sup> Բ. Կյուլեսերյան. Եղիշէ, Քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 291:

<sup>12</sup> Ն. Ադոնց. Հայաստանը Հոստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 447–448:

<sup>13</sup> Н. Марр. Аркауи, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах. – Кавказский культурный мир и Армения. Ереван, 1995, с. 258.

<sup>14</sup> C. Toumanoff. The Mamikonids and the Liparitids. – «Armeniaca», Venice, 1969, pp. 125, 133.

<sup>15</sup> R. Hewsen. Armenia: A Historical Atlas, Chicago, 2001.

<sup>16</sup> Լեո. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 361:

<sup>17</sup> K. Balekjian. Hittite and the Mamikonians. – «Armenian Review», 1983, № 2, pp. 47–53.

<sup>18</sup> Ա. Քեշիշյան. Մամիկոնյանների ծագման ավանդությունը և պատմական իրականությունը. – Հայոց պատմության հարցեր (ժողովածու), հ. 1, Երևան, 1997, էջ 7–20:

Ընդ որում, եթե թվարկված նախահայրենիքներից երեքի տեղադրությունը հայտնի է (Դերբենդ, Լազիկա, Տայք), ապա չորրորդինը, որը, մինչ այժմ անհայտ է, լուրջ ենթադրությունների տեղիք է տալիս: Հետևաբար, կարևոր է այն հարցադրումը, թե՛ ո՞րն է այդ առեղծվածային «Ճենաց աշխարհը», որը, անտարակույս, հայ մատենագիրների համար հորինածին անուն չէր: Խորենացին, Բուզանդը, Սերենսը, Հովհան Մամիկոնյանը, Ուխտանեսը<sup>19</sup>, Ղևոնդը<sup>20</sup> նկարագրում են երկիրը, գրում են նրա թագավորի մասին, որը հզոր էր և ազդեցիկ, հաճախ միջնորդ էր հանդիսանում հայոց ու պարսից միջև, դեսպանություններ էր ուղարկում հարևան երկրներ և այլն: Այսինքն՝ առնվազն մինչև VII–VIII դար, մինչև արաբների արևելյան նվաճումները, այդ երկիրը գոյություն ուներ, բայց կոնկրետ ո՞ր երկիրն էր դա, որտե՞ղ էր գտնվում՝ վիճելի է և առ այսօր այդ հարցի շուրջ համակարծրություն չկա:

Խորենացին գրում է, որ Ճենքը «արևելյան հյուսիսային աշխարհ է», Անանիա Շիրակացին հուշում է, որ Ճենաց երկրից հարավ ընկած է Հնդկաստանը, Ղևոնդի հայտնած տեղեկությունների համաձայն՝ Ճենաց երկիրն անմիջապես Խորասանի՝ Պարսկաստանի ամենաարևելյան նահանգի հարևանությամբ է: Վերջին վկայությունը մատենագիր ու աշխարհագրագետ Վարդան Արևելցունն է, որը ժամանակագրական առումով էլ է երևի թե վերջինը, և ապացույց է, որ դեռևս XIII դ. հայոց համար Ճենաց աշխարհը երևակայածին երկիր չէր: Այդուհանդերձ, հետագայում ոչ քիչ թվով հետազոտողներ եղան, ովքեր մշուշապատեցին այդ անունը, դարձրին անորոշ, նույնացրին կամ նմանեցրին իրենց հայտնի անունների հետ, փոխարինեցին դրանցով: Ամենամեծ աղավաղումների ենթարկվեց VII դ. հռչակավոր «Աշխարհացոյց»-ը (նախկինում այն վերագրվում էր Մովսես Խորենացուն), որի ընդարձակ խմբագրությունում Ճենաց երկիրը Ասիայի 37-րդ երկիրն է. «ԼԷ աշխարհ Ասիոյ Միւնիկիա է, որ է Ճենք, յելից կալով Սկիւթիոյ. սահմանի նովաւ ի մտից, իսկ ի հիւսիսոյ եւ յելից՝ Անձանոթ երկրաւ. եւ ի հարաւոյ՝ Հնդկօք եւ Միւնեցոց աշխարհօք. Եւ է Ճենաստան ընդարձակ դաշտս բնակեալ ազգս քսանեւինն» (ընդգծումները մերն են. – Ն. Դ.)<sup>21</sup>:

Ի դեպ, հատուկ ընդգծենք, որ տվյալ մեջբերումը վենետիկյան հրատարակությունից է, քանզի երևանյան հրատարակության մեջ նույն հատվածը կարդում ենք այսպես. «Ընդհանուր Ասիայի երեսունյոթերորդ երկիրը Մյունիկիան է, այսինքն՝ Չինաստանը: Գտնվում է Սկյութիայից դեպի արևելք: Սահմանակից է արևմուտքից Սկյութիային, հյուսիս-արևելքից՝ Անձանոթ երկրին, իսկ հարավից՝ Հնդկաստանին և Միւնեացոց երկրին: Չինաստանը ընդարձակաձավալ դաշտավայր է, ուր

<sup>19</sup> Ուխտանեսու եպիսկոպոս. Հայոց պատմություն, Երևան, 2006, էջ 72:

<sup>20</sup> Ղևոնդ. Պատմություն, Երևան, 1982, էջ 41:

<sup>21</sup> Աշխարհացոյց Մովսիսի Խորենացու, Վենետիկ, 1881, էջ 46:

բնակվում է քսաննինը ժողովուրդ» (ընդգծումները մերն են.– Ն. Դ.Յ<sup>22</sup>: Կա՞, արդյոք, տրամաբանական բացատրություն, թե ինչու է գրաբարից աշխարհաբար թարգմանելիս ճենք-ը Չինաստան դարձել: Ոչ, իհարկե: Նշանակում է՝ մոռանում ենք, որ տեղանվան պատմությունն ինքնին վավերագիր է և ընդհանուր պատմության մաս է կազմում: Արդ՝ մի թե մենք չենք կորցնում պատմական ճշգրտությունը և արհեստականորեն բազմաթիվ հարցականներ չենք ստեղծում, երբ կամայականորեն, առանց համապատասխան ծանոթագրումների՝ թարգմանում կամ փոփոխում ենք տեղանունները: Անկասկած կորցնում ենք, ավելին, նվազեցնում ենք հայ մատենագրական երկերի աշխարհաբար թարգմանությունների գիտական արժեքը:

Ժամանակին դեռևս Ք. Պատկանյանն է հրաժարվել իր և այլոց մինչ այդ արտահայտած կարծիքից, թե ճեները չինացիներն էին, և գրել, որ ըստ «հայ պատմիչների՝ IV դարում Հայաստան գաղթած ճեները ոչ մի դեպքում չեն եղել իսկական չինացիներ, ինչպես սովորաբար մեկնաբանում են այդ անվանումը»<sup>23</sup>: Քասունու եզրակացությունն է. «Ճենաց աշխարհը Չինաստանն չէ»<sup>24</sup>: Խ. Վեմյանը երկրորդում է. «Մեր պատմիչների ճենը, ճենաստանը պետք չէ Չին, Չինաստան հասկանալ»<sup>25</sup>: Բշխան Մ. Թումանյանը պարզում է շփոթի պատճառը: «Բանն այն է,– գրում է նա,– որ Չինաստանը մշտական անուն չունի: Երկիրը անուանում է այնպես, ինչպես եւ թագաւորական Տունը: Թագաւորոդ հարստութիւնը փոխուելով՝ փոխում է թե՛ երկրի եւ թե՛ ժողովրդի անունը... Եթէ ուշադրութիւն դարձնենք չինական աղբիւրներին, կը տեսնենք որ այդ երկրում երբեմն գոյութիւն է ունեցել ճեն կոչուած թագաւորական մի հարստութիւն... Ուրեմն մեր նախնիքը ճենաստան ասելով հասկանում էին չինական այն նահանգը, որի մէջ իշխել է ճեն հզօր Տունը: Բնական է ենթադրել որ հայերը ծանօթացել են Չինաստանին հենց ճեն Տան հպատակների միջոցով»<sup>26</sup>: Թումանյանը ճիշտ է նկատում, որ համանուն երկիր կարելի է գտնել չինաց աշխարհում: Այդ ուղղությամբ պրպտումներ կատարողն արագ համոզվում է, որ Չինաստանի պատմության մեջ իսկապես հաճախակի է հիշատակվում Չեն կամ Չեն-Խան (չինարեն հնչում է Chèn Hà) երկիրը, որը, թերևս, կարելի է համարել, որ ճենքն է: Նրա մասին առաջին հիշատակությունը թվագրվում է մ. թ. ա. XI

<sup>22</sup> Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի. Աշխարհագրյց: Մատենագրություն, Երևան, 1979, էջ 311–312:

<sup>23</sup> К. Патканов. О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских.– Известия Кавказского отдела императорского русского географического общества, т. VI. Тифлис, 1879–1881, с. 47.

<sup>24</sup> Ե. Քասունուի. նշվ. աշխ., էջ 95:

<sup>25</sup> Խ. Վեմյան. Մամիկոնյանց նախահայրենիքը.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, -3, էջ 204:

<sup>26</sup> Մ. Թումանյան. նշվ. աշխ., էջ 516–517:

դարով<sup>27</sup>: Այսպիսով՝ դրանցից ո՞ր մեկն էր մեր մատենագիրների հիշատակած ճենքը կամ, այլ կերպ՝ վերջապես որտե՞ղ էր գտնվում այդ առասպելական ճենաց աշխարհը: Խնդրի լուծմանը կարծես թե ոչնչով չի նպաստում նաև Շիրակացու տված երկրորդ անունը՝ «ԼԷ աշխարհ Ասիոյ Սիւնիկիա է, որ է ճենք»: Քասունին Սյունիկիան (Ճենաստանը) չի նույնացնում Չինաստանի հետ, այլ տեղադրում է մոտավորապես ներկայիս Քաշմիրի տարածքում, ըստ այդմ համարելով, որ «պատմական աղբյուրներու համեմատ՝ ճենաց երկիրը անմիջական դրացի է Քուշանաց երկիրին»<sup>28</sup>: Հ. Սվազյանը նույնպես Սյունիկիան Չինաստան չի թարգմանում, այլ առանձին երկիր է համարում և այն պատկերացնում է Ամու-Դարյայի ավազանում, Խորասանից արևելք<sup>29</sup>: Մինչ այդ Վեմյանն էր նկատել, որ «Մամիկոնյանց մեկնավայրը՝ նախահայրենիքը Միջին Ասիան է»<sup>30</sup>:

Հետաքրքրական է, որ, այդուհանդերձ, երբևէ փորձ չի արվել գոնե վարկած առաջ քաշել, թե որտեղի՞ց է այդ Սիւնիկիա անունը, ինչպե՞ս է, որ այն Շիրակացուց առաջ Բուզանդն ու Խորենացին չեն գործածել և, վերջապես, ի՞նչ չափով կարող է օգնել դրա ստուգաբանությունը ճենաց երկրի տեղադրությունը որոշակիացնելուն: Այս առումով, թերևս, միակ փորձը Քասունունն է, որը, սակայն, սկզբից եթե անհաջողության էր դատապարտված, քանզի հարգարժան բանասերի գնումները հունահռոմեական գրականության շրջանակներում էին, իսկ այդ երկերում անհրաժեշտ տեղեկություններ չէին էլ կարող լինել, որովհետև չինական աշխարհը անձանոթ էր դրանց հեղինակներին: Այսօր էլ է դժվար հաստատապես պնդել, թե ինչ ասել է Սիւնիկիա: Բայց եթե հեռու չգնանք, ուրիշներին չդիմենք և ուշադիր կարդանք Շիրակացու ցուցումները, ապա կկողմնորոշվենք, որ՝ ա) այդ երկիրը գտնվում է Մինեացոց երկրից (Չինաստանից) հյուսիս, բ) քանի որ Սյունիկիան անվան լատինականացված ձևն է, ապա պետք է ենթադրել, որ ժողովրդի անունը այդն արմատի հիման վրա եղել է սյունիկ կամ սյունի (բնականաբար, հայերենում տերմինը ձևափոխվել է): Այժմ այս երկու նախադրյալը համեմատենք հետևյալ մասնավոր դատողության հետ. Չինական մեծ պարսպից հյուսիս-արևմուտք արող քոչվորներին կոչում էին սյուննու<sup>31</sup>: Այժմ բաղդատենք Սյունիկիա և սյուննու: Նմանություն կա՞: Կարելի է ասել՝ նույնություն կա: Նրանց մասին չին պատմա-

<sup>27</sup> С ы м а Ц я н ь. Исторические записки (Ши Цзи), т. 1. М., 2001, с. 188.

<sup>28</sup> Ե. Քասունի. նշվ. աշխ., էջ 81, 95:

<sup>29</sup> Հ. Սվազյան. Ճենքերը և «ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների. – ՊԲՀ, 1976, - 4, էջ 207, 209:

<sup>30</sup> Խ. Վեմյան. նշվ. աշխ., էջ 204:

<sup>31</sup> Վեմյանը նկատում է, որ Չինական մեծ պարսպը կառուցվել է հատկապես նրանցից ապահովվելու համար. տե՛ս Խ. Վեմյան. նշվ. աշխ., էջ 202:

բան Միմա Չժենն այսպես է գրում. «Տան և Յույ հարստությունների շրջանում այն ցեղերը, որոնք կոչվում էին շանժուն կամ սյունյույ, Մյա հարստության շրջանում սկսեցին կոչվել չունվել, Ին հարստության շրջանում՝ գույֆան, Չժոու հարստության շրջանում՝ յանյուն, Իսկ Խան հարստության շրջանում հայտնի էին սյուննու ընդհանուր անվամբ»<sup>32</sup>: Արդ՝ եթե Շիրակացին Սյունիկիան և Ճենքը մեկ է համարում, վերոնշյալ փաստերն էլ հավանական են դարձնում տեղի ժողովուրդների արյունակցությունը, ապա արժե՞ նորից կասկածել Ճենքի կամ Ճենաստանի արևելքում գտնվելու վրա:

Այսպիսով, եթե ոմանք համառություն են ցուցաբերում Ճեների երկիրը արևելքից արևմուտք տեղափոխելու հարցում, ապա պետք է նկատի ունենալ, որ դա արդեն ոչ այնքան գիտական շահախնդրությունից, որքան քաղաքական շահադիտությունից էլնելով է արվում: Եթե նախկինում գիտական հարցերին միմիայն եվրակենտրոնության տեսանկյունից մոտենալու ավանդույթից էլնելով, ինչպես նաև չինական աղբյուրներին անհաղորդ լինելու, բացառապես հունահռոմեական հեղինակների երկերի ու արևմտյան պատմաբանների ուսումնասիրությունների վրա հենվելու պահանջով առաջնորդվելով Ճենքը տեղափոխում էին նաև Կովկաս, ապա մեր ժամանակներում պետք է համարել, որ նույնը կրկնողները գիտակցաբար գիտական կեղծիք են կատարում: Ճենաց երկրի աշխարհագրական դիրքը ճշգրտելու նպատակով վերը բերված բոլոր փաստարկները միանգամայն բավարար են դրա տեղադրությունը Ասիա մայրցամաքի խորքում տեսնելու համար: Անտարակույս, Մամիկոնյանները Ճենքից կամ Ճենաստանից էին, որը բուն Չինաստանը չէր, այլ նրան հարակից երկիր էր: Մա աներկբա փաստ է:

Ինչ վերաբերում է Մամիկոնյանների ազգությանը, ապա նախ պետք է նշել, որ, չնայած XIX դ. վերջին տասնամյակներից սկսած հատուկ ուսումնասիրության առարկա է Մամիկոնյանների տոհմի պատմությունը, այնուամենայնիվ առ այսօր անհայտ է, թե ո՞ր ժողովրդից էին նրանք և ի՞նչ լեզվով էին խոսում: Հայ մատենագրության մեջ Խորենացին, Բուզանդն ու Մեբեոսը գրում են Մամիկոնյանների Ճենական ծագման մասին, Հովհան Մամիկոնյանը (Ձենոբ Գլակ)՝ հնդկական: Տեսակետ կա, որ այդ անունները պարզապես հավաքական կամ պայմանական են, քանի որ դրանց տակ պետք է հասկանալ քուշաններին կամ հեփթաղներին: Ուրեմն, առաջին հայ հեղինակների համոզմամբ, Մամիկոնյանները Ճեն են<sup>33</sup>, որոնց հետագայում սկսեցին հեփթաղների հետ նույնացնել: Իսկ ուլքե՞ր էին հեփթաղները:

<sup>32</sup> Ст' у Сима Цянь. Եզվ. աշխ., էջ 226:

<sup>33</sup> Ճեների մասին հայկական աղբյուրների բոլոր տեղեկությունները չափածո ձևով ամփոփ շարադրել է Միմեն Ապարանցին (տե՛ս Միմեն վարդապետի Ապարանցոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն գարմի եւ Մամիկոնեացն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 28–32):

Պարզվում է՝ նրանք V–VI դդ. փոխարինել են քուշաններին<sup>34</sup>: Ընդամին, առկա է քուշանների կապը թետալացիների հետ, ինչն էլ իր հերթին բացատրում է, թե ինչպես է, որ «հեփթաղներ են կոչվում թետալները կամ թետալացիները, իսկ բյուզանդացիները նրանց կոչում են Սպիտակ հոներ, որոնք ցեղակից էին իրենց և բնակվում էին պարթևների աշխարհի հյուսիսային կողմում»<sup>35</sup>: Նկատենք, որ մարդաբանական տիպով հեփթաղներն արիացի էին<sup>36</sup> և հարևան էին քուշաններին, տիրեցիներին, այլթացիներին<sup>37</sup>: Ըստ այդմ, ընդունելի է Քասունիի այն եզրակացությունը, որ հայ պատմագիրների մոտ քուշանները, թետալացիները, թոխարները, սպիտակ հոները Պարսկաստանի արևելյան սահմանների հարևանությամբ միշտ հանդես են եկել իրար փոխարեն<sup>38</sup>:

Անդրադառնանք մի «տեսակետի» ևս, որի հեղինակները չնայած իրենց պնդումների համար պատմական ոչ մի ապացույց չունեն, սակայն դա նրանց չի խանգարում, որպեսզի շարունակ ջուր պղտորեն: Խոսքը Մամիկոնյանների թուրքական ծագման մշտասխալ «տեսության» մասին է: Այն ոչ միայն արմատապես տարբերվում է պատմական փաստառատ ճշմարտությունից, այլև գիտական կեղծ հիմնավորումներով ինքնին հնարավորություն է ստեղծում այլապատկան պատմությունից հափշտակություն կատարելու համար: Փոքր-ինչ մանրամասնենք խնդիրը: Հայ պատմիչներից Շապուհ Բագրատունին միակն է, որ ձեներին նույնացնում է թուրքալեզու մի ժողովրդի՝ խազարների հետ<sup>39</sup>: Միգուցե դա էլ հենց պատճառ է հանդիսացել նաև ֆրանսիացի հայագետ Սեն Մարտենի համար, որը գրել է, թե հայերը ձեն են անվանում Ամու-Դարյայից այն կողմ ապրող թուրքերին<sup>40</sup>: Հաջորդ արևելագետը կրկին ֆրանսիացի Լ. Կաենն է, որի համար նմանապես «իսկական թուրքերը հեփթաղներն էին»<sup>41</sup>: Ապա հանդիպում ենք արևելագետ Հ. Սքոլդի համանման կարծիքին, ըստ որի ձեները ոչ թե չինական, այլ թուրքական ցեղի ներկայացուցիչներ են, այսինքն՝ այն հեփթաղներն են, որոնք թուրքացան և դարձան օղուզների նախնիները<sup>42</sup>:

Կարծում ենք՝ վերոշարադրյալ կարծիքները հստակեցնելու և իրարից տարանջատելու համար տեղին կլինի հակիրճ ներկայացնել այն իսկայական տարածաշր-

<sup>34</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981, էջ 134:

<sup>35</sup> Վ ա ր դ ա ն Ա ր և Ե Լ Գ ի. նշվ. աշխ., էջ 71:

<sup>36</sup> Н. Веселовский. Несколько новых соображений по поводу «пересмотра» вопроса о происхождении гуннов.— «Журнал Министерства народного просвещения». СПб., 1882, с. 100.

<sup>37</sup> Л. Г у м и л е в. Эфталиты и их соседи в IV в.— «Вестник древней истории», 1959, 1, с. 129–140.

<sup>38</sup> Ե. Ք ա ս ո ն ի ի. նշվ. աշխ., էջ 86:

<sup>39</sup> Պատմություն Շապուհ Բագրատունու, Էջմիածին, 1921, էջ 18:

<sup>40</sup> Saint Martin. Mémoires historiques et géographiques sur L'Arménie, II, Paris, 1819, p. 19–20.

<sup>41</sup> Léon Cahun. Introduction à l'histoire de l'Asie, Paris, 1896, p. 99.

<sup>42</sup> H. Skold. L'Origine des Mamiconiens.— «Revue des études arméniennes», 1925, p. 134–135.

ջանք, որը բուն իրանական աշխարհը բաժանում էր չինական աշխարհից: Այդ երկիրը կոչվում էր Թուրան, տարածվում էր Իրանից հյուսիս-արևելք՝ զբաղեցնելով ամբողջ Միջին Ասիան ու հարավարևմտյան Միջինը, և հազարամյակներ շարունակ բնակեցված էր ընդհանուր «թուր» կամ «թուրա» անվանումով իրանական քոչվոր ցեղերով<sup>43</sup>: Մեզ հետաքրքրող դարաշրջանում թուրանցիներ էին ասում սակերին, քուշաններին, պարթևներին, հեփթաղներին և տեղաբնիկ այլ ժողովուրդներին<sup>44</sup>: Ընդ որում, թուրանցիներն իրանալեզու լինելով հանդերձ, այնուամենայնիվ, մշտական պայքարի մեջ էին Իրանի հետ, այդ իսկ պատճառով հետագա ժամանակներին է փոխանցվել արևելքից եկած թշնամու այն կերպարը, որն այնուհետև սկսամայից վերագրվել է թյուրքերին: Այսինքն՝ թյուրքերը նույնացվեցին թուրանցիներին, որոնք ամենևին էլ թյուրք չէին<sup>45</sup>: Ցավոք, դա այնքան էլ անմեղ շփոթություն չէր, որովհետև նպաստեց, որպեսզի «թյուրքական տեսության» հնարամիտ հետևորդները, օգտվելով էթնիկ «թուրյու» (թյուրք, թուրք) և աշխարհագրական «Թուրան» հասկացությունների հնչյունաբանական մերձավորությունից՝ թյուրքերի նախահայրենիքներից մեկը տեղադրեն Կենտրոնական Ասիայում և ավելի արևմուտք: Այնինչ՝ թյուրքալեզու ցեղերի ու ցեղախմբերի բնակության տարածքները Ալթայի լեռնազանգվածից դեպի արևելք են՝ Մոնղոլիային ու Չինաստանին սահմանակից: Թյուրքական ցեղերն առաջին անգամ Թուրան են թափանցել VI դարում, երբ նրանց հորդաները 567 թ. Բուխարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթեցին հեփթաղներին: Իսկ «Թուրան» և «թյուրք» հասկացություններն սկսեցին նույնացվել XIV–XV դդ. սահմանագլխին, երբ Լենկ-Թեմուրի կենսագիրներից մեկը նրան անվանեց Թուրան շահ:

Նկատի ունենալով պատմական այս կարգի իրողությունները՝ առնվազն զավեշտալի է թվում ոչ վաղ անցյալում և այսօր պատմությունը վերաշարադրելու ուղղությամբ թուրք հեղինակների ձեռնարկած բոլոր փորձերը: Իրականում, սակայն, չի կարելի դրանցից բխող վտանգն անտեսել: Եթե վերը նշված հայ և այլազգի ուսումնասիրողները, զուտ գիտական նպատակներ հետամտելով, ճեններին չինացիներից զատելու համար նրանց թուրանական ծագում էին վերագրում, ապա թուրք պատմաշինողները, այդ ուղին խորացնելով ու թյուրքերին թուրանցի դարձնելով, արդեն բավական ժամանակ հատուկ գործնական շահեր են հետապնդում: Ըստ նրանց հորինվածքների, Մամիկոնյաններն ու Պահլավունիները թյուրքական կարա-կոյունլու և ալ-կոյունլու ցեղերի տոհմապետներ էին (զառանցանքի հասցեա-

<sup>43</sup> Edward A. Allworth. Central Asia: A Historical Overview, Duke University Press, 1994, p. 86; M. Diakonoff. The Paths of History, Cambridge University Press, 1999, p. 100; В. Шуховцов. Туран (к вопросу о локализации и содержании топонима). М., 2000, и/б «Симург».

<sup>44</sup> А. Абакумов. Туранцы не тюрки.– «Экономическая газета». М., 2002, 1 40, с. 3.

<sup>45</sup> Sê ú E. Yarshater. Encyclopaedia Iranica.– www.iranica.com.

տեր՝ Ֆ. Կրրզրոզլու)<sup>46</sup>: Նպատակը հետևյալն է. ցույց տալ, որ՝ ա) առնվազն մ. թ. III դարից է սկսվել թյուրքական ցեղերի ներհոսքը Կասպից–Սև ծով միջակա երկրներ, բ) Հայաստանում XV դ. տիրապետություն հաստատած թուրքմենական կարա-կոյունլու և ալ-կոյունլու ցեղերը ոչ թե Միջին Ասիայից էին եկել, այլ տեղացիներ էին՝ սերունդը Մամիկոնյանների և Պահլավունիների<sup>47</sup>: Այսինքն, եթե նրանց լսենք, ապա Մամիկոնյանները թյուրքալեզու ցեղերի առաջին ներկայացուցիչներն էին, որ սելջուկ թյուրքերից յոթ հարյուր տարի առաջ էրևացել են Հայկական լեռնաշխարհում: Առաջին թուրքերը մեր մեջ<sup>48</sup>: Հնարավոր էր դա: Վստահաբար կարող ենք ասել՝ ոչ<sup>49</sup>: Նախասելջուկյան շրջանում Փոքր Ասիայի, Անդրկովկասի և Հայաստանի «թուրքացման» առիթով Կրրզրոզլուի, Գյունայթայի և նմանների անհիմն պնդումները հանգիստ կարելի է հերքել թուրք պատմաբան Նամիկ Օրքունի խոսքերով. «Թուրքը կերտել է պատմություն, բայց չի գրել: Այդ պատճառով թուրքերի պատմության համար սկզբնաղբյուրներ ստիպված ենք փնտրել օտարների մոտ»<sup>50</sup>: Եվ քանի որ թուրքի պատմության սկզբնամասն ինչպես նախկինում, այնպես էլ այսօր գրվում է չինական, պարսկական, հայկական ու բյուզանդական աղբյուրների հիման վրա, ապա միանգամայն հասկանալի է դառնում նաև այն, թե ինչու են նրանք ամբողջովին թարգմանել Կիրակոս Գանձակեցու, Մատթեոս Ուռհա-

<sup>46</sup> Հայ ընթերցողին «մխիթարելու» համար նկատենք, որ թուրքերը ումից հնարավոր է՝ պատմություն են գողանում: Ռ. Աթաբինենը, օրինակ, ռուսական Օլեգ և Իգոր իշխաններին է դարձնում թուրք (Օլեգը՝ Ուլուդ, իսկ Իգորը՝ Ուզուր). տե՛ս R. A t a b i n e n. Les apports turcs dans le peuplement et la civilisation de l'Europe Orientale, Istanbul, 1952, p. 135.

<sup>47</sup> М. З у л а л я н. Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970, с. 65.

<sup>48</sup> Կրրզրոզլու հնարամիտը հայտնաբերել է, որ XI դ. սելջուկ թյուրքերը եկել են Փոքր Ասիա և այստեղ միախառնվել իրենց տեղացի թյուրք եղբայրների, այդ թվում՝ օղուզ քրիստոնյաների (հայերի) հետ (տե՛ս նույն տեղում, էջ 58):

<sup>49</sup> Նշանավոր թուրքագետ Դ. Երեմենը գրում է. «Թուրքական ցեղի ծագման պրոցեսի ժամանակագրական ելակետը, որը ի վերջո հանգեցրեց թուրք ժողովրդի կազմավորմանը, վստահորեն կարելի է համարել XI դարի վերջը, երբ սկսվել էր թյուրքական ցեղերի, գերազանցապես օղուզների ու թուրքմենների զանգվածային գաղթը դեպի Փոքր Ասիա: Թյուրքերի ավելի վաղ շրջանի ներթափանցումները այդ տերիտորիան, որոնք, իհարկե, չի կարելի բոլորովին հաշվի չառնել, կրում էին էպիգոդիկ բնույթ և քանակական տեսակետից աննշան էին, որպեսզի կարողանային վճռականորեն ազդել Փոքր Ասիայի էթնիկական պրոցեսների վրա: Հետևաբար, թուրքերի ծագումը, թուրք ժողովրդի կազմավորումը տեղի են ունեցել ուշ միջնադարի շրջանում (XII–XV դդ.)» (Դ. Երեմեն. Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 5):

<sup>50</sup> М. З у л а л я н. Նշվ. աշխ., էջ 52:



յեցու, Թովմա Մեծուփեցու, Մովսես Կաղանկատվացու, Սամուել Անեցու, Սմբատ Գունդաստարլի երկերը<sup>51</sup>:

Իսկ եթե թուրքերն իրենք են վստահում հայկական աղբյուրներին, հետևաբար, մենք մեր հերթին անվարան կարող ենք պնդել, որ վերջիններիս վկայությամբ հայերը եթե մինչ այդ թուրք տեսած լինեին, ապա արդեն ծանոթ կլինեին և այդքան չէին զարմանա Հայոց աշխարհ մտած առաջին թուրքերի տեսքից: Ընդունենք Մ. Թումանյանի կարծիքը, համաձայն որի՝ Մամիկոնյանները մոնղոլ չէին, թուրք չէին, այլ արիացի էին, որոնք Հնդկաստանի հյուսիսից անցել էին Չինաստան ու բնակվում էին Խու-բեյ և Խու-նան նահանգներում<sup>52</sup>: Լ. Գումիլյն ասում է՝ Պամիրի և Հինդիկուշի լեռնային շրջանները բնակեցված էին հնդ-իրանական խմբի ժողովուրդներով<sup>53</sup>: Էդ. Գիբոնը, որը եվրոպական պատմագիտության մեջ առաջիններից մեկն է Մամիկոնյանների ծագման հիմնահարցին ուշադրություն դարձրել, տեսակետ է առաջ քաշում, թե Մամիկոնյանները կարող էին սկյութական ծագում ունենալ<sup>54</sup>: Սկյութական, բայց ոչ թյուրքական: Իսկ սկյութները պատկանում էին հնդեվրոպական լեզվաընտանիքի հյուսիսիրանական խմբին, ցեղակից էին իրանալեզու սակերին, սարմատներին, ալաններին, մազքութներին, սպիտակ հոներին, հեփթաղներին: Ընդ որում՝ ճեները սպիտակ էին, հեփթաղները սպիտակ էին, քուշանները սպիտակ էին, թետալները սպիտակ էին, հոները սպիտակ էին: Մրանք բոլորը սպիտակ էին և եվրոպեոիդ ռասային էին պատկանում: Թյուրքերը, մասնավորապես, օղուզները, սպիտակ չէին և մոնղոլոիդ էին<sup>55</sup>, այսինքն՝ Մամիկոնյանների նախնիները թուրք չէին կարող լինել: Նշենք նաև, որ օղուզները ձևավորվել են VI դարում, իսկ Մամիկոնյանների նախնիները Հայոց աշխարհ են եկել III դարում, հետևաբար տեղին չէ նրանց օղուզ կոչելը<sup>56</sup>: Այսինքն՝ թուրք պատմահեղինների հրամցրածը պարզապես կարճտուն կեղծիք է:

<sup>51</sup> Նույն տեղում:

<sup>52</sup> Մ. Թումանյան. նշվ. աշխ., էջ 518:

<sup>53</sup> Л. Гумилев. նշվ. աշխ., էջ 135:

<sup>54</sup> С. Э. Д. Гибон. История упадка и разрушения Римской империи. М., 1883–1886.

<sup>55</sup> Դ. Երեմեև. նշվ. աշխ., էջ 291:

<sup>56</sup> Մեզ համար ավելորդ պատմական մի ինտրիգ կա՝ կապված IX դ. բյուզանդական նշանավոր զորավար Վարդան Թուրքի անվան հետ, որը 803 թ. նույնիսկ կայսր է հռչակվել: Վարդան անունը ուսումնասիրողներին թույլ է տալիս կարծելու, որ նա Մամիկոնյան էր, սակայն հարցեր է առաջացնում նրա մականունը և այստեղ մինչև անգամ այնպիսի խոշոր բյուզանդագետ, ինչպիսին Ա. Կաժդան է, կասկածի տակ է առնում նրա ազգային պատկանելությունը (տե՛ս А. К а ж д а н. Армяне в составе господствующего класса Византийской империи XI–XII вв. Ереван, 1975, с. 117): Բայց արդյո՞ք մարդու մականունը ծանրակշիռ փաստարկ է նրա էթնիկ ծագումը որոշելու համար: Անշուշտ՝ ո՛չ: Հր. Բարթիկյանը ստիպված հատուկ հոդված է գրել (տե՛ս Р. Б а р т и к я н. Провозглашенный в 803 г. Византийским императором стратилат Востока

Ի մի բերելով ճեների էթնոգենեզիսի վերաբերյալ վարկածները (ճեն, ճան, չին, արի, թետալ, քուշան, հեփթաղ, հոն, հնդիկ, մազքութ, սկյութ, պարթև, թոխար, մոնղոլ, թուրքմեն, օղուզ)՝ կատարենք հետևյալ ընդհանրացումը. ճենք և ճենացի անունները հավաքական հասկացություններ են, ամենևին կապ չունեն մանավանդ Ճանիքի (Լազիկայի) և թուրքերի հետ: Ճեները արիական ժողովուրդ էին, սպիտակամորթ էին և ապրում էին մինչև Ասիայի խորքերը հասնող հնդիրանական աշխարհի սահմանակցությամբ: Մա անժխտելի ճշմարտություն է:

Ցավոք, վերն ասվածն ամենևին ամբողջը չէ համանման խեղումների մասին: Երևույթն ակնհայտորեն արտաքին ու ներքին պատեր ունի, այդ իսկ պատճառով, թերևս, ընթերցողին թողնենք որոշելու՝ օտա՞ր, թե՞ հայրենական կեղծարարություններն են առավել վտանգավոր: Հատկապես եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ հայրենասիրական արդի պատմաբանության ասպարեզում այնպիսի նոր միտումներ են նկատվում, որոնք անհնար է միանշանակորեն դրական գնահատել հայ երիտասարդության աշխարհայացքի ձևավորման համար: Այսպես, օրինակ, ասպարեզում է մեր անցյալի կնճռոտ հարցերով հետաքրքրվող հեղինակների մի խումբ, որը ձգտում է Մամիկոնյանների պատմության մեջ հին որոնումները նոր ուղղությամբ հունավորել: Համենայն դեպս, նման հայտ են ներկայացնում Արմեն Քեշիշյանը, Արամ Մկրտչյանը, Գևորգ Հովհաննիսյանը, ավելի վաղ՝ Խաժակ Բալեկյանը և այլք<sup>57</sup>: Ինչ են ասում նրանք. ա) Մամիկոնյանները բնիկ հայեր են (սերում են խեթերից), բ) Մամիկոնյանների բնօրրանը Տայքն է, գ) Մամիկոնյանները երկարմատ են, կան Տայքի և Տարոնի Մամիկոնյաններ: Ընդ որում, Տայքի Մամիկոնյանները, քանի որ բնիկ էին ու դեռ երկար ժամանակ պիտի մնային հեթանոս՝ հայրենասեր ու թագավորասեր էին, իսկ Տարոնի Մամիկոնյանները, քանի որ անմիջապես ընդունել էին քրիստոնեությունը՝ եկեղեցասեր ու իշխանամոլ էին:

патрикий Вардан этнический турок?– Античная древность и средние века, вып. 39. М., 2009, с. 93), որպեսզի ի դերն դարձնի այդ անհաջող մտահնարությունը և դրանից բխող բոլոր անցանկալի հետևանքները: Նա անառարկելի պագույցներ է բերում, որ սույն Վարդանը ծագումով թուրք չէր և չէր էլ կարող լինել, իսկ անձնական ինչ-ինչ հատկանիշների համար նրան մականուն է տրվել հայերի կողմից բավականին սիրված առասպելական հերոս Տորք//Տուրքի անունը, որն անգետները դարձրել են Թուրք:

<sup>57</sup> Տե՛ս K. Balekjian. Hittite and the Mamikonians.– “Armenian Review”, 1983, № 2, pp. 47–53; Ա. Քեշիշյան. Մամիկոնյանների ծագման ավանդությունը և պատմական իրականությունը.– Հայոց պատմության հարցեր (ժողովածու), հ. 1, էջ 7–20, Ա. Մկրտչյան. Զամուրհայ Մամիկ. Մամիկոնյաններին օտար ծագում վերագրելը հիմնովին սխալ է.– «Լուսանցք» (Երևան), 2011, -5, էջ 8, -6, էջ 8, Գ. Հովհաննիսյան. Հայոց տերերը, Երևան, 2012:

Թվում է, թե այստեղ նորություն չկա<sup>58</sup>, սակայն դա այդպես է մինչև այն պահը, երբ նրանք սկսում են հաստատել իրենց պնդումները: Ինչպես տեսանք, նախկինում Խորենացուց մինչև Ադոնց, իշխան Մ. Թումանյան և մերօրյա ուսումնասիրողներ՝ Մամիկոնյանների նախահայրենիքը որոնում էին մերձսիբերյան Ճենքից մինչև մերձպոնտական Ճանիք ընկած անընդգրկելի տարածքում, և նրանցից ոչ մեկի մտքով չէր անցնում հարևան Տայքի դուռը բացել ու տեսնել այնտեղ նստած Մամիկոնյաններին: Իսկ ահա Գ. Հովհաննիսյանը բացում է այդ դուռն ու տեսածից տարակուսած՝ ուները թողնում է. «Ամենին էլ հարկ չկա հեռու գնալ, երբ այդ տոհմի արմատները Հայքում են. այո, Մամիկոնյանները մեկն էին հայոց բնիկ, հինավուրց տոհմերից և հարյուրամյակներ շարունակ իշխել են Տայքում, Խաղկտիքում (ինա՛ խաղտիք. – Ն. Դ.), Ճաների երկրում (ընդգծումը մերն է. – Ն. Դ.): [...] Ամենին չի բացառվում Մամիկոնյանների առնչությունը Ճաների հետ, որը հնագույն ժամանակներում կարող էր և արտահայտվել խնամիական կապերի տեսքով: Մակայն փնտրել նրանց արմատները Ճանիքում այն դեպքում, երբ Հայկական լեռնաշխարհում բավականին շատ են Մամիկոնյան նախնիների հետքերը՝ ավելորդ է»<sup>59</sup>:

Կարծում ենք՝ այս մտավարժանքին վերն արդեն պատասխանել ենք, բայց ահա մյուս «խոշոր գյուտը» հանգամանալից անդրադարձ է պահանջում: Նկատի ունենք Մամիկոնյաններին խեթական ծագում վերագրելը, այդպես նրանց պատմությունն անհեթեթության աստիճանի երկարաձգելը: Տվյալ պարագայում մեր ուղեկցորդները կլինեն Գ. Հովհաննիսյանի համար սկզբնաղբյուրներ հանդիսացող Ա. Քեշիշյանն ու Խ. Բալեկոյանը, քանզի նրանք են, որ Խեթական թագավորությունում (մ. թ. ա. XVIII–XII դդ.) Մամիկոնյաններ են հայտնաբերել: Նախ, ասես իբրև նախարան՝ Քեշիշյանը համոզմունք է հայտնում, թե «խեթա-խուռիական ժամանակներից ի վեր Մամիկոնյանների գոյության մասին կարող է վկայել նաև նրանցում տարածված Մուշեղ անձնանունը: Այն համարվում է խեթական փոխառություն և համապատասխանում է Մուրշիլ անձնանվանը»<sup>60</sup>: Բհարկե, սա ամենին օրիգինալ միտք չէ թեկուզ այն պատճառով, որ առաջինը Հր. Աճառյանն է նման լծորդում կատարել՝ չենթադրելով անշուշտ, որ իր վարկածն արտառոց բեկումներ կարող է ունենալ: Հիշեցնենք, որ, ըստ Աճառյանի, Մուշեղ արական անունը ծագում է «հաթեան» Mursili անունից, հետևապես, «ըստ այսմ հայերենի հին ձևն է Մուրշեղ, որ

<sup>58</sup> Նկատի ունենք այն, որ Հացունին տասնամյակներ առաջ է Մամիկոնյաններին երկու խմբի բաժանել՝ սների և լավերի (տե՛ս Վ. Հացունի. Մովսես Խորենացին կը դառնա ի հինգերորդ դար, Վենետիկ, 1935, էջ 47):

<sup>59</sup> Գ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 84–86:

<sup>60</sup> Ա. Քեշիշյան. նշվ. աշխ., էջ 19:

ապա ր-ի անկումով դարձել է Մուշեղ»<sup>61</sup>: Մեծ լեզվաբանը որևէ բացատրություն չի տվել, թե ինչպես է –իլի վերջավորությունը դառնում –եղ (ր-ի անկումը դեռ հասկանալի է): Բայց քանի որ Քեշիշյանը խիստ շեշտադրում է կատարում դրա վրա, ապա ստիպված ենք նշել, որ, այնուամենայնիվ, այդօրինակ գուցահեռն արհեստական է՝ Մուշեղի նախնականը չի կարող Մուրշիլ լինել: Նախ տեղյակ լինենք, որ խեթական թագավորի (երեքն են եղել) անվան ուղիղ ձևն է Մուրսիլի կամ Մուրսիլիս (հազվադեպ են ընթերցում Մուրշիլի), հետևաբար՝ որքա՞ն կարելի է անունը ձևափոխել, որպեսզի ստացվի ցանկալին: Սա՝ իր հերթին, բայց հիմա մտորելու համար ևս մի առիթ տանք. նույն խեթական արձանագրություններում գործածվող գաղափարագրերից մեկն ընթերցվում է MUSEN և նշանակում է թռչում<sup>62</sup>: Մուշեղին ո՞րն է մոտ՝ Մուրսիլի՞ սը, թե՞ Մուշենը: Առավել ևս՝ եթե նկատի ունենանք, որ Մուրսիլիս անունը հային ոչինչ չի ասում, իսկ Թռչուն և Թռչնակ անձնանունները նա մինչ այժմ պահպանում է<sup>63</sup>: Թողնենք, սակայն, այս անպտղաբեր աշխատանքը և առանց երկբայության հայտնենք, որ չկա այնպիսի խեթական անուն, որն այսօր համարենք Մամիկոնյանների շնորհիվ պահպանված<sup>64</sup>:

Ինչևէ: Չմոռանանք, որ մեր այս հեղինակների սկեռումն է համոզել բոլորին, իբր «Մամիկոնյաններն ունեն տեղական, հայկական ծագում և նրանց ծագման ավանդությունը (Խորենացի, Սեբեոս.– Ն. Դ.) չի համապատասխանում իրականությանը»<sup>65</sup>: Տարօրինակն այն է, սակայն, որ նրանք նման անվերապահ կարծիքը հիմնավորելու համար ոչ թե ազգային պատմության քառուղիներում են փաստարկներ որոնում, այլ ինչ-որ հիշատակներ են փնտրում հայկական արեալին հարևան քաղաքակրթությունների մեջ: Եվ գտնում են: Ծանոթանանք վերջապես այն խոշոր գյուտի հետ, որ կատարել է Խ. Բալեկջյանն Ամերիկայում, իսկ Ա. Քեշիշյանը յուր ընկերներով ջատագովում է Հայաստանում<sup>66</sup>: Խոսքը խեթական արձանագրություններում հանդիպող amumikuni բառի մասին է, որն ըստ գերմանացի խեթագետների՝ խուռիերեն նշանակում է զինվորական կամ կրոնական բարձր պաշտոն // բարձրաստիճան անձ:

<sup>61</sup> Տե՛ս Ն. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 455:

<sup>62</sup> Տե՛ս W. Gernot. The Hurrians, Warminster-England, 1989, p. 69.

<sup>63</sup> Տե՛ս Կ. Դուրգարյան. Անվանագիրք, Երևան, 1981, էջ 117:

<sup>64</sup> Նույնիսկ եթե երբևէ հայտնաբերվի նման անուն՝ արդյո՞ք դա կնշանակի, որ Մամիկոնյանները խեթական ծագում ունեն: Մեր օրերում Արգիշտի, Մենուա անունները բավականին տարածված են, ասել է թե՛ այդ անունները կրողներն ուրարտական անմիջական արմատն են ունեն:

<sup>65</sup> Կ. Դուրգարյան. նշվ. աշխ., էջ 20:

<sup>66</sup> Տե՛ս K. Balekjian. նշվ. աշխ., Ա. Քեշիշյան. նշվ. աշխ.:

Բալեկջյանին այդ բառը հանդիպել է խեթագիտական մի աշխատության էջերում<sup>67</sup> (այլ ոչ թե արձանագրություններում), ընդ որում՝ ինքը դրա հեղինակային ընթերցումը չունի: Բառի բացատրությունը նույնպես իրենք չէ, այլ սեփականը միայն հետևություններն են: Փաստորեն, Մամիկոնյանների ծագման «նոր տեսության» գիտական հիմնավորումը հիմքից թույլ է: Այդուհանդերձ, ճիշտ չէ այն անտեսելը, քանզի ումանց համար, ինչպես նշեցինք, դա ոչ թե ճշմարտանման, այլ ճշմարտացի պատմություն է դարձել, մատնանշվում է ու մեջբերվում: Բալեկջյանի նախատրամադրվածությամբ՝ հենց *amumikuni* բառն է այն բանային, որով բացատրվում է Մամիկոնյանների թե՛ տոհմանունը, թե՛ ծագումը, և թե՛ զբաղեցրած դիրքը: Նա, ելնելով *amumikuni* և Մամիկոնյան բառերի արտասանական որոշ նմանությունից, ինչպես նաև բառիմաստի ու Մամիկոնյանների զբաղեցրած պաշտոնը գուցորդելով՝ անհերքելի է համարում այն փաստը, որ Խեթական թագավորությունում Մամիկոնյանների նախնիներն են եղել գլխավոր զորահրամանատարները, որ Մամիկոնյան ազգանունն առաջացել է պաշտոնի անվանումից և, վերջապես, Մամիկոնյանները բնիկ են<sup>68</sup>: Վարկածին հավաստիություն հաղորդելու համար Բալեկջյանը նկատում է, որ երկու բառերի առաջին երկու հնչյունները նույնն են, պարզապես խեթական տերմինի մեջ դրանք կազմում են փակ վանկ՝ *am*, իսկ հայկական ազգանվան մեջ բաց վանկ՝ *ma*<sup>69</sup>: Քեշիշյանն էլ, յուրովի ըմբռնելով Բալեկջյանի անզլերենը, հղում է կատարում վերոբերյալ հատվածի վրա՝ բոլորովին այլ հետևություն անելով, թե Բալեկջյանի կարծիքով «*amumikuni* և Մամիկոն բառերի միջև համապատասխանությունն առավել ակնհայտ է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ փակ վանկային *am* հիմքը կարող է փոխվել բաց վանկային *ma* հիմքի»<sup>70</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ բառերի արհեստական նմանեցումը Քեշիշյանին է, որը դրան հասնում է վատ թարգմանության կամ, ավելի շուտ, կամայական մեկնաբանության միջոցով: Բայց քանի որ այդ հանգամանքը, ըստ էության, չի փոխում հարցի բնույթը, հետևաբար, ստիպված ենք շարունակել մեր առարկությունները և առաջին հերթին անդրադառնալ բառի կազմությանն ու ստուգաբանությանը:

<sup>67</sup> *Sté u J. Friedrich and A. Kammenhuber. Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1975, p. 69.*

<sup>68</sup> *Այս ամենը գրեթե բառացի կրկնում է Ա. Քեշիշյանը:*

<sup>69</sup> *Բալեկջյանի տեքստը հետևյալն է. «Hittite amumikuni' and Armenian Mamikon exhibit a concordance of comparative phonemic pattern: closed syllabic theme (initial am-) / open syllabic theme (initial ma-). A closed syllabic theme is formed by a vowel nucleus followed by a consonant element, like initial am- in Hitt. Amumikuni, an open syllabic theme is formed by a consonant element followed by a vowel nucleus, like initial ma- in Arm. Mamikon» (տե՛ս K. Balekjian. Նշվ. աշխ., էջ 48).*

<sup>70</sup> *Ա. Քեշիշյանն. նշվ. աշխ., էջ 18:*

Նախ նշենք, որ մեր պրպտումների ընթացքում պարզեցինք, որ բառի գրության ձևերն են՝ *a-mu-mi-ku-ni-iš*<sup>71</sup>, *a-mu-um-me-ku-un-ni-iš*<sup>72</sup>, *am-mu-u!-me!-ik-ku-un-ne*<sup>73</sup>: Նշանակում է *amumikuni*-ն ինչ-որ միջինացված, ժամանակակից մարդու քիմ-քին հարմարեցված ձև է, որի հիման վրա, հասկանալի է, անհնար է ճշգրիտ եզրահանգումներ անել: Բառակազմական վերլուծությունը ցույց է տալիս, որ *amumikuni*-ն ոչ թե պարզ (պարզ ածանցավոր), այլ բաղադրյալ բառ է, հետևաբար, *am* մասնիկը ոչ թե վանկ է, այլ բառի բաղադրիչ: Այսինքն՝ խոսքը բաց/փակ վանկի (միզուցե նախածանցի<sup>2</sup>) մասին չէ, այլ ձևույթի: Իսկ քանի որ ձևույթը տվյալ հնչյունակազմով ու տվյալ իմաստով լեզվական անբաժանելի միավոր է, ուրեմն՝ հնչյունների փոխատեղությունն անհնար է, այդ մասին դատողություններ անելն էլ ավելորդ է: Ընդ որում, կրկնաբանություն չի լինի, եթե հիշեցնենք, որ հայերենը չունի այնպիսի կանոն (ինչպես որ չունի անգլերենը՝ Բալեկջյանի բնագրի լեզուն), որի համաձայն փակ վանկը կարող է դառնալ բաց վանկ: Այսպիսով՝ եթե նույնիսկ հայերենը խեղճերենից փոխառել է տվյալ բառը, ապա նա չունի այնպիսի լեզվական օրենք, որը պահանջեր վերջինիս նման փոփոխության ենթարկել<sup>74</sup>:

Ինչ վերաբերում է *amumikuni*=գորահրամանատար նույնականությանը, որն էլ հենց մեր հարգարժան հեղինակների հաղթածին է, ապա ակնհայտորեն նրա վարգուղու վրա վտանգավոր մի խոչընդոտ է երևում, որը, սակայն, նրանք չեն կամենում տեսնել: Դա այն է, որ եթե իրենց առաջարկած եղանակով (վանկը փոփոխության ենթարկելով) բառերի նմանաձայնության հասնենք, ապա բուն բառն ակամայից այնպես կիմաստափոխենք, որ հետո *amumikuni*-ն այլևս գորահրամանատար չի նշանակի: Չէ՞ որ խեթական սեպագիր արձանագրություններում օգտագործված նշանների ամեն մի խմբում յուրաքանչյուր, պայմանականորեն ասած, վանկ առանձին բառ է և պահպանում է իր նախավոր իմաստը: Այսպես, եթե *a-mu-mi-ku-ni-iš* -ը կամ *am-mu-u!-me!-ik-ku-un-ne*-ն կարդանք աքքադերեն<sup>75</sup>, ապա *am*

<sup>71</sup> J. Friedrich and A. Kammenhuber. *Նշվ. աշխ., էջ 69*, Giuseppe Del Monte. *Antologia della letteratura ittita*, Pisa, 2003, p. 21; *Deeds of Šupiluliuma Cited According to the Edition of Güterbock*, 1956; *Keilschrifttexte aus Boghazköi*, Leipzig, 1916 (Berlin, 1921).

<sup>72</sup> J. Friedrich and A. Kammenhuber. *Նշվ. աշխ., էջ 69*:

<sup>73</sup> A. Kammenhuber. *Orakelpraxis, Träume und Vorzeichenschau bei den Hethitern*, Heidelberg, 1976, p. 90, 210.

<sup>74</sup> Հայերենում բառի մեջ հնչյունների փոխատեղության երևույթ կա, որը կոչվում է դրափոխություն (օրինակ՝ խստոր-սխտոր, դգալ-գդալ), սակայն դա ոչ մի կապ չունի փակ և բաց վանկերի հետ:

<sup>75</sup> Աքքադերեն կամ ասուրա-բաբելերեն՝ պաշտոնական փաստաթղթերում խեթերենի հետ խեթական թագավորների օգտագործած երկրորդ հիմնական լեզուն: Բ. Հրոզնին այդ արձանագրությունները վերծանել է աքքադերենի հիման վրա (տե՛ս О. Герни. Хетты. М., 1987, гл. VI). – [Historic.ru](http://Historic.ru)

վանկը (բառը) կնշանակի վայրի ցուլ, երկիր, իսկ եթե *ma*, ապա կնշանակի նավ, նավակ: Այժմ, որպեսզի ասվածին կշիռ հաղորդենք, բառի ստուգաբանության մի տարրերակ առաջարկենք, նախապես նշելով, իհարկե, որ դա ընդամենը վարկած է և միանշանակության չի հավակնում: Բառարանի օգնությամբ կատարենք առաջին քայլը՝ դուրս գրենք այն բառերը, որոնց թարգմանությունը կա: Դրանք են՝ *am* - վայրի ցուլ, երկիր, *mu* - որդի, *un* - մարդիկ, ժողովուրդ, հեծյալ, մարտակառքով արշավող, *u* - կապ գոյականների միջև, *ku* - ուժ, հզորություն<sup>76</sup>: Այժմ, եթե նկատի ունենանք, որ խեթերի թագավորին նաև անվանում էին իրենց գերագույն աստված Ամպրոպի աստծուն մարտերում օգնող սրբազան ցլի որդի, ապա առանց դժվարության կարող ենք կազմել հետևյալ դարձվածքը, որն ինքնին առանձին բառի կամ հասկացության արժեք ունի: Այս է՝ Ամպրոպի աստծո սրբազան ցլի որդու երկրի մարդկանց ուժն ու հզորությունը ղեկավարող հեծյալ: Այսինքն՝ գորահրամանատար: Հիմա՝ եթե *am-ը* հեշտորեն փոխարինում ենք հորինովի *ma-ով*, ապա չէ՞նք տեսնում, որ նույնքան հեշտությամբ չենք կարող դրանց բառիմաստները փոխարինել մեկը մյուսով և չիսխստել ներքին տրամաբանությունը: Ակնհայտ է, որ սրբազան վայրի ցուլը չենք կարող փոխարինել նավ-նավակով և կրկին գորահրամանատար կարդալ: Հանգիստ թողնենք, ուրեմն, *amumikuni* բառը, քանզի նախ չի կարող այն փոփոխության ենթարկվել, և ապա՝ հայերենին չի փոխանցվել *n* չ որպես հասարակ և *n* չ էլ հատուկ անուն:

Այժմ տեսնենք, թե խեթերն այդ բառը որ դեպքում են օգտագործել: Ֆրիդրիխի և Կամենհուբերի աշխատության մեջ, որին հղում է կատարել Բալեկջյանը, գրված է, որ բառը գործածվել է Աքքադի թագավոր Մարգոնի անվան հետ որպես տիտղոս (կոչում)՝ *am-mu-u-me-ik-ku-un-ne*, *Titel Sargons von Akkad*<sup>77</sup>. Կամենհուբերը նույնը կրկնում է իր մենագրության մեջ՝ *LUGAL-gi-en-ne*, *Sargon von Akkad; Titel am-mu-u-me-ik-ku-un-ne*<sup>78</sup>: Բառը կարդացվում է նաև Սուլպիլուլիումա թագավորի CTH 40 IV արձանագրության մեջ<sup>79</sup>, այս անգամ խեթերի դեմ ճակատամարտող խուռի Տակուհլիի անվանը շաղկապված<sup>80</sup>: Կարելի է հանդիպել նաև բառի հեռավոր ազգականին, որը, ի դեպ, Մամիկոնին ավելի շատ է նման: Ինքներս համոզվենք՝ «az-

<sup>76</sup> Аккадский (вавилано-ассирийский) язык, вып. I. Хрестоматия с таблицами знаков, сост. Л. Липин. Л., 1957, с. 18, 21.

<sup>77</sup> J. Friedrich and A. Kammenhuber. Նշվ. աշխ., էջ 69:

<sup>78</sup> A. Kammenhuber. Նշվ. աշխ., էջ 90:


<sup>79</sup> Խ՞՞ Giuseppe Del Monte. Նշվ. աշխ., էջ 21, Deeds of Šupiluliuma Cited According to the Edition of Güterbock, 1956; Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig, 1916 (Berlin, 1921).

<sup>80</sup> Տե՛ս Խրестоматия по истории международных отношений, кн. 1. – Древний мир. Благовещенск, 2013, с. 88.

*ia-za-ma-mu-kno Dur-ri, թարգմանվում է՝ թշնամի խուռին [հարձակվեց]»<sup>81</sup>: Ընդհանրացումը հետևյալն է. խեթերը *amumikuni* բառն իր բոլոր տարբերակներով ու ձևափոխություններով օգտագործել են միայն և միայն իրենց թշնամիներին բնութագրելու համար: Դա նշանակում է, որ այն ոչ մի կերպ չէր կարող վերաբերել խեթական պետության կառավարման համակարգում բարձր դիրք գրավող անձի: Ցավոք, այս հանգամանքն աչքաթող են արել Բալեկջյանը և նրա համախոհները, ինչի պատճառով էլ հապճեպ եզրակացություններ են կատարել:*

Խնդրի բարդությունն ավելի լավ պատկերացնելու համար, թերևս, չէր խանգարի հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքը. խեթական արձանագրություններում *amumikuni* բառը երևում է խուռիերեն տեքստերում, իսկ խուռիերենը գործածվում էր լոկ կրոնական տեքստերում և գուցե դա է պատճառը, որ բառին զինվորականից բացի, նաև հոգևոր պաշտոնի իմաստ է վերագրվում: Մակայն վերը բերված օրինակներից կարելի է ենթադրել, որ *amumikuni*-ն նախևառաջ (եթե ոչ միմիայն) զինվորական տերմին է: Բայց ինչո՞ւ է գրվում միայն խուռիերեն, այն էլ այն դեպքում, երբ խեթերի գլխավոր հակառակորդ բուն Խուռի-Միտաննիում գորահրամանատարը պարտադիր թագածառանգն էր լինում և կոչվում էր *tertenu* (ճշգրիտ՝ *a-na te-er-te-nu-ut-ti-šu*)<sup>82</sup>: Մա չի՞ նշանակում, որ բառի իմաստը դեռևս լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:

Այսուհանդերձ, հարցն առկախ է մնում. իսկ ինչպե՞ս էր կոչվում խեթական գորահրամանատարը: Վերջիվերջո, հզոր կայսրության հիմքում գործն ու գորահրամանատարությունն էր, հետևաբար, անկասկած, խեթերն ունեին իրենց զինվորական աստիճանակարգն ու ռազմական տերմինները: Այդպես էլ կա, դրանք առկա են հիերոգլիֆային խեթերենում: Համեցեք, *tuzzi*՝ նշանակում է զինվոր, գորք,

*tuzziyaš išha*- բանակի հրամանատար, որի գաղափարագիրը սա է՝  <sup>83</sup>: Ընդ որում, նույն այդ հիերոգլիֆային արձանագրություններից վերցրած տերմիններով կազմված վարչական, զինվորական և կրոնական պաշտոնների ցանկերում *amumikuni* ընթերցվող գրանշան չկա<sup>84</sup>: Այո՛, թվում էր, թե խեթերեն կարտասանենք *amumikuni* կախարդական բառն ու պատմությունն իր բոլոր գաղտնիքները

<sup>81</sup> Г. Гиоргадзе. Хетты и хурриты по древнехеттским текстам.– «Вестник древней истории», 1969, <sup>1</sup> 1, с. 68.

<sup>82</sup> D. Luckenbill. Hittite Treaties and Letters *AJSL Journal*, 1920–1921, XXXVII, p. 173; Г. Аветисян. Военно-политические отношения между Митанни и Хеттским государством в середине XIV в. до н. э.– «Вестник общественных наук» АН АрмССР, 1977, № 9, с. 109.

<sup>83</sup> Shai Gordin. Scribal Families of Hattuša in the 13th Century B. C., a Prosopographic Study, Tel Aviv, 2008, p. 226.

<sup>84</sup> Նույն տեղում:



կբացի մեր առջև<sup>85</sup>: Եվ առաջին հերթին կապացուցի ոչ միայն Մամիկոնյան տոհմի բնիկությունը, այլև կստուգարանի ազգանունը, բայց ավաղ չի ստացվում, նման բան տեղի չի ունենում:

Մի քանի նկատառում ևս հայտնենք: Նախ, նկատենք, որ Մամիկոնյանների խեթական հետքը ոչ միայն նմանաձայնորեն, այլև պատմականորեն հիմնավորելու համար անհրաժեշտ է Տայքը (եթե նրանք Տայքից էին, և Տայքը նրանց տոհմական կալվածքն էր) տեսնել Խեթական պետության կազմում: Մակայն անատարկելի փաստ է, որ Տայքը երբեք Խեթական կայսրության մեջ չի եղել: Այստեղ ժամանակագրական և տեղագրական անհամատեղություններ կան. Տայքի մասին առաջին հիշատակությունները հանդիպում են մ. թ. ա. XII–IX դդ. ասորեստանյան սեպագիր արձանագրություններում, այսինքն՝ այն ժամանակ, երբ Խեթական կայսրությունն այլևս գոյություն չուներ:

Երկրորդ: Եթե ենթադրյալ Մամիկոնյաններն այդքան բարձր դիրք էին գրավում Խեթական կայսրությունում ու խեթերի հետ էլ չէին հեռացել պատմաբանից, ապա պետք է, որ նրանք անպայման երևային նաև Հայոց պատմության, այսպես կոչված, ուրարտական, այնուհետև Երվանդունյաց և Արտաշիսյան դարաշրջաններում, այլ ոչ թե մ. թ. III դարում՝ Արշակունիների ժամանակ: Մինչդեռ նման փաստեր գոյություն չունեն: Կ. Թումանովը, ով, անկասկած, մյուսներից շատ ավելի էր շահագրգռված Մամիկոնյաններին Տայքի հետ կապելու հարցում, երբեք իրեն թույլ չտվեց նրանց արմատներն այդքան հեռուն տարածել: Նրա կարծիքով՝ հայոց նախարարական տներից 5 տուն ուրարտական ծագում ունեն, 15-ը ծագում էր Երվանդական թագավորական տոհմից, 9 տուն՝ Արշակունիներից, սակայն այդ խմբերից ոչ մեկում ևս Մամիկոնյաններին չէր տեղադրում<sup>86</sup>:

Երրորդ: Մամիկոնյան տոհմանունը երբեք -ունի վերջածանց չի ունեցել (մոռանանք խեթա-խուրիական amumikuni-ն, որովհետև, ինչպես վերը փաստեցինք, այդ բառը երբեք հաստուկ անուն չի դարձել, առավել ևս՝ Մամիկոնյանի համար հիմք չի հանդիսացել): Հարցն ինքնըստինքյան է կարևորվում, եթե նկատի ենք ունենում, որ ուրարտական ցեղանուններին բնորոշ էին -իկ և -ունի ածանցները<sup>87</sup>, ինչն իր

<sup>85</sup> Խեթերեն էլի բառեր կան, որոնք պակաս թեկնածու չեն Մամիկոն դառնալու համար: Օրինակ՝ ma-an-ni-ku-wa-an (Hans G. G. Sterbock and Theo P. J. van den Hout, The Hittite Instruction for the Royal Bodyguard, Chicago, 1991, p. 77); nu-mu-knn, am-mu-uk-ka (S. Gordin. Նշվ. աշխ., էջ 60); mnn-ma-kan և այլն: Մակայն ամենասկներայնը wartanna բառն է (Օ. Герни. Նշվ. աշխ., գլ. VI), որն առանց ճիգի կարող ենք Վարդան կարդալ: Ընդամին հետաքրքրական է, որ wartanna-ն հեծելագորային վարժանքների ժամանակ տրվող հրահանգ է: Այսինքն՝ մի քիչ էլ որ ձգենք, չենք հասնի Վարդան գորավարին:

<sup>86</sup> Տե՛ս C. Toumanoff. Studies in Cristian Caucasian History, Georgetown University Press, 1963, p. 222.

<sup>87</sup> Ա. Պետրոսյան. Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, 2006, էջ 48:

հերթին մեծ նշանակություն է ստանում հայկական այս կամ այն նախարարական տան բնիկությունը որոշելիս: Նշանավոր ուրարտագետ Բ. Պիոտրովսկին դեռևս 1945 թ. գրում էր, որ հայ իշխանների հնագույն տոհմական ազգանունները դուրս են գալիս հայկական պետության սահմաններից՝ կապվելով Ուրարտուի հետ ոչ միայն արմատներով, այլև ունի ձևավորմամբ, այսինքն՝ ուրարտական սեպագրերում առանձնապես բնորոշ վերջածանցով<sup>88</sup>:

Չորրորդ: Ունի վերջածանցով ազգանունները սովորաբար իրենց հիմքում ունենին կոնկրետ տեղանուն կամ ցեղանուն, իսկ եան //յան-ը բխում էր այս կամ այն անձնանունից, հետևաբար՝ յան-ով վերջացող հայոց հին ազգանունները որևէ ցեղի, ազգի (տոհմի) կամ երկրի, հողի հետ կապ չունենին: «Աշխարհագրական տեղանունները, – գրում է Ադոնցը, – բաղադրված են նախարարական տոհմանունների հետ, նկատում ենք, որ դրանց միջև սերտ կապ կա. իշխանական տները կամ կրում են երկրամասերի անունները և կամ, ընդհակառակը՝ այդ երկրամասերին տալիս են իրենց տոհմական անունները»<sup>89</sup>: Բնչպես տեսնում ենք, Մամիկոնյաններն այս պայմանին չեն համապատասխանում:

Հինգերորդ: Հայերի մոտ տոհմանունների -ունի վերջածանցը երբեք - եան //յան չէր դառնում, որովհետև յան-ով նշվում էին եկվորները՝ Ռոփսյան, Աշխադարյան, Առավելյան և այլն<sup>90</sup>: Եկվորները թագավորի կողմից նախարարների շարքն էին դասվում, եթե ինչ-ինչ ծառայություններ էին մատուցում թագավորին ու թագավորությանը, ստանում էին կալվածքներ՝ հաճախ ժառանգաբար տնօրինելու իրավունքով: Այսպիսով՝ չնայած արտահայտված կարծիքներին, ապացուցային հիմքեր չկան պնդելու, որ Տայքի Մամիկոնյանները տարբերվում էին Տարոնի Մամիկոնյաններից և ունեին խեթական արմատներ:

Վերոշարադրյալը պատմաբանասիրական կնճռոտ հարցի ինքնանպատակ վերհանում չէ: Խնդիրն այնքանով է արդիական, որ այսօր էլ շարունակում է լուրջ շահարկումների նյութ հանդիսանալ: Անվիճելի է, որ Մամիկոնյանների ծագումն ինքնին անավարտ թեմա է և անհնար է այն ընդհանրացնել լոկ հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա<sup>91</sup>: Սակայն դա չի նշանակում

<sup>88</sup> Բ. Պիոտրովսկի. Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական բաժանմունք), 1945, -6, էջ 13:

<sup>89</sup> Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 332:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 296, 339:

<sup>91</sup> Օրինակ, գրեթե անձանոթ են մնում չինական գրավոր հուշարձանները, որտեղ պատմություններ կան չինական բարձրաստիճան զինվորականների Պարսկաստան գալու մասին: Այդ երկրում նրանք լավ են ընդունվել, մինչև անգամ պետական ծառայության են անցել՝ հաճախ Պարսից թագավորից ստանալով քարավանային ուղիների պաշտպանության գործը: Բացի այդ, չին գորավարները երբեմն նաև արշավանքներ են կատարել մինչև Սև ծով, Ղրիմ ու Սիրիա, որոնց ընթացքում ծանոթացել են Հայքին և Վիրքին:

նան, թե կարելի է երևակայությանը տուրք տալ, պատմությունը ծովում էլ այնպես, ինչպես հարմար է: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, նման «մասնագետներ» կան թե՛ հայ, թե՛ այլազգի ուսումնասիրողների մեջ: Վերջիններիս առումով առաջին հերթին հարկ է նշել թուրք և վրացի պատմաբաններին, որոնք առանձին-առանձին Մամիկոնյաններին «իրենցով» են անում: Թուրքերի մասին վերը բավականաչափ խոսեցինք, այժմ մի փոքր վրացիների մասին:

Նախ նշենք, որ խնդրո վերաբերյալ վրացական «ինքնատիպ» մեկնաբանությունները ոչ միայն գիտականորեն են սխալ, այլև բավական վտանգավոր են հատկապես մեր օրերում, երբ պատմագիտությունն առավելագույնս քաղաքականացված է: Վրաց պատմաբանները սեփական գիտելիքներն ու հմտությունները պարզապես միջոց են դարձնում հայ ժողովրդից և Հայաստանից իրենց իսկ ձևակերպած պահանջներն իբրև թե պատմականորեն հիմնավորելու համար, և դրա ամենացայտուն օրինակներից մեկն էլ Մեծ Հայքի անքակտելի մաս կազմող Տայք նահանգի պատկանելության հարցն է: Նրանք մի շարք պատմաբանների (այդ թվում՝ Ն. Ադունցի) ապրիորի տեսակետների հանրագումարից մեկնակետ սարքելով պնդում են, թե «տայեցիները էթնիկ վրացիներ են, իսկ Տայքը (Տառ) բուն վրացական տարածք է»<sup>92</sup>: Տրամաբանությունը հետևյալն է. ա) եթե Մամիկոնյանները ճանիքից են, իսկ ճանիքը վրացական երկիր է, նշանակում է Մամիկոնյանները վրացի են, բ) քանի որ Տայքի տերերը վրացական ծագում ունեցող Մամիկոնյաններն են, նշանակում է Տայքը վրացական է: Ափսոսանքով նկատենք, որ այս երևույթը նորություն չէ մեր հարևանների համար: Դեռևս ակադեմիկոս Ս. Ջանաշիան էր ընդդեմ Ն. Տոկարսկու այն համոզումի, թե Տայքը հայկական նահանգ է՝ իբրև հակափաստարկ հայտարարում. «Մամիկոնյանները՝ Տառյի (Տայքի.– Հ. Դ.) ազդեցիկ նախարարները, որոնք հաստատվել էին հայ ազնվականության առաջին շարքերում, ծագումով վրացական ճան ցեղից էին»<sup>93</sup>:

Մամիկոնյանների ծագումը Տայքի հետ կապողների և այդպես մի ամբողջ նահանգ յուրացնողների հաջորդ ականավոր ներկայացուցիչն է մեզ արդեն ծանոթ Կ.

<sup>92</sup> М. Ва ч н а д з е, В. Гу р у л и, М. Ба х т а д з е. История Грузии (с древнейших времен до наших дней) в 3-х т.– Тбилисский государственный университет.– www.fictionbook.ru, с. 12.

<sup>93</sup> С. Д ж а н а ш и а. Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского «Архитектура древней Армении». Тбилиси, 1947, с. 8. Նույն տեղում մեկ ուրիշ գյուտ եւս. «Անվիճելի է, և դա վկայված է նաև հայկական աղբյուրներով, որ Բագրատունիները սերում են հին վրացական Սպեր գավառից»: Նկատենք, որ նոր հնարք չէ նվաճված երկրները վերջնականապես յուրացնելու նպատակով տեղաբնիկներին իրենց ցեղակից հայտարարելը: Անտիկ շրջանում հույները, հետագայում (և մինչ օրս) անատոլիական ու անդրկովկասյան թուրքերը, հատկապես մեր պարագայում, երբեք չեն զլացել դիմել նման քայլերի: Տվյալ դեպքում վրացիները, սովորելով հույներից ու թուրքերից, ինչպես տեսնում ենք՝ նույնպես վարպետորեն են կիրառում այդ միջոցը, պնդելով, իբր տայեցիները վրացի (քարթվել) են:

Թումանովը<sup>94</sup>: Նա իր ուսումնասիրություններում փորձում է ամրապնդել Կովկասում Մամիկոնյանների բնիկ լինելու մասին գոյություն ունեցող միանգամայն անհիմն թեզը՝ զարմանալիորեն անտեսելով նախկինում թեկուզ Մ. Թումանյանի ու Ե. Քասունու ներկայացրած պատմական անատարկելի ապացույցները Մամիկոնյանների եկվորության մասին<sup>95</sup>: Սակայն պարզվում է՝ Թումանովի նպատակը վրացիների համար միայն Տայքը յուրացնելը չէր, այլ ընդամենը սկզբնախաղ էր դա: Իսկ գլխավոր նպատակն էր բարձրացնել վրացիների դերակատարությունը ոչ միայն տարածաշրջանի պատմության մեջ, այլև Կովկաս-Բյուզանդիա քաղաքակրթական հարաբերությունների համատեքստում ընդհանրապես<sup>96</sup>: Բանն այն է, որ Բյուզանդական կայսրության պետական և եկեղեցական կառույցների վերնաշենքում, տնտեսական, ռազմական, մշակութային ասպարեզներում ամենուր հայեր են երևում, իսկ վրացիներ՝ կա՛մ չկան, կա՛մ չնչին չափով կան: Թումանովը ցանկանում է փոխել պատկերը՝ այդ գործի համար հարմար դիտելով հենց Մամիկոնյաններին<sup>97</sup>: Հաշվարկը հետևյալն է. Մամիկոնյաններն են, որ մինչև անգամ կայսերական գահին են տիրել, և եթե ինքը հաստատում է, որ նրանք ազգությամբ վրացի

<sup>94</sup> Թումանովի այս մղումը մատնացույց է անում նաև Ն. Գարսոյանը. տե՛ս Mamikonean, Encyclopaedia Iranica.– www.iranica.com. Կարծում ենք՝ երբեք չի կարելի բացառել այն տարբերակը, որ պատմական հեռանկարում հնարավոր է այնպիսի զարգացումներ լինեն, որոնց դեպքում կրկին որոշիչ նշանակություն ստանա Տայքի պատկանելության հարցը: Ըստ ամենայնի, վրացիները դրան ավելի լուրջ են վերաբերում:

<sup>95</sup> Հրապարակումների տարեթվերն են՝ Թումանյան – 1911, Քասունի – 1957, Թումանով–1969: Այսպիսով՝ Թումանովը կա՛մ վատ գիտնական է՝ ամբողջությամբ չի ուսումնասիրել թեմային նվիրված հրապարակումները, կա՛մ սովորական կեղծարար է՝ պատմություն է հորինում: Երկու դեպքում էլ նրա կատարածն անարժեք է, գիտության համար ոչ պիտանի:

<sup>96</sup> C. T o u m a n o f f. Caucasia and Byzantium.– “Traditio”, 27, 1971, p. 111.

<sup>97</sup> Կ. Թումանովի ծավալուն հոդվածի վերաբերյալ լուրջ դիտողություններ է կատարել Ա. Կաժդանը: Նա իր գրախոսության մեջ միանգամայն տեղին է նկատում, որ Թումանովի ուսումնասիրության ծանրության կենտրոնում ոչ թե Բյուզանդիայի և կովկասյան երկրների փոխհարաբերությունները, այլ Բյուզանդիայի և կովկասցիների հարաբերություններն են: Թումանովը խնդիրը բաժանում է երկու մասի. 1) ազգաբնակչության ներհոսքը Կովկասից և կովկասցիների (առաջին հերթին՝ հայերի) դերը բյուզանդական վերնախավում, 2) կովկասյան ազդեցությունը Բյուզանդիայի վրա: Հայտնի է, որ IX–X դդ. բյուզանդական բանակի շուրջ 25 %-ը կազմում էին հայերը, իսկ ինչ վերաբերում է վրացիներին, ապա նրանց մասին առանձնապես տեղեկություններ չկան: Սակայն Թումանովը ձևը գտնում է. նա երկու ցուցակ է հրապարակում՝ ա) հայերը և վրացիները Բյուզանդիայի բարձրագույն զինվորական պաշտոններում Հուստինիանոս I-ի օրոք և բ) հայերը և վրացիները բյուզանդական ծառայության մեջ VI դ. վերջից մինչև 1056 թվականը: Ահա այս կերպ նա վրացիներին (քարթվելներին) բերում, հավասարեցնում է հայերին (տե՛ս А. Каждан. С. Тумановф, Caucasia and Byzantium, “Traditio”, 27, 1971, pp. 111–152.– ԼՂԻ, 1973, դ 4, p. 193–197):

են, ապա ինքնաբերաբար վրացիները դառնում են Բյուզանդական կայսրության քաղաքական-մշակութային ժառանգության կրող, ապա՝ դրանից մասնաբաժին ունեցող: Այդ իսկ պատճառով, ըստ նրա, դեռևս լուրջ ուսումնասիրության կարոտ է Բյուզանդական պատմության մեջ հայկական տարրի զբաղեցրած տեղը, այն հարցերը, թե այդ տարրը որտեղ է ծագել և որտեղից է տեղափոխվել կայսրություն: Ահա այսպիսի «անմեղ խաղեր»:

Ցավոք, այն ամենը, ինչը մեծահոգաբար մենք անվանում ենք պատմական անճշտություններ՝ վաղուց արդեն հաստատուն դրույթ դարձած շրջանառվում են գիտական միջավայրում որպես ուղղորդող ցուցմունքներ<sup>98</sup>: Ահավասիկ, Թումանյանից հետո անգլիացի ուսումնասիրող Ա. Բրայերը գրում է, թե ժամանակակից շատ պատմաբաններ համակարծիք են այն հարցում, որ Մամիկոնյանները Տրապիզոնի շրջակայքից են՝ Ճանիքից (միջին հունարենով՝ Tzannoi), իսկ նրանց չինական ծագման շփոթությունը գալիս է հայերեն Ճանիք և Ճենք անունների նմանությունից, երկուսի համահնչունությունից<sup>99</sup>: Մամիկոնյանների ճանական ծագման թումանյանության տարբերակն է պաշտպանում ամերիկացի Ռոբերտ Հյուսենը (Հյուսենյան), որն ազգությամբ հայ է, սակայն դա որևէ նշանակություն չունի, որովհետև Թումանյանը նրա գիտական դեկավարն է եղել<sup>100</sup>: Հեղինակավոր կովկասագետի համարում ունեցող բրիտանացի Դ. Լանգը նույնպես պատրաստի կաղապար է

<sup>98</sup> Այս կապակցությամբ իտալացի հայագետ Տրայինան զգուշացնում է. «Հմուտ գիտնականներ ինչպես Թումանյանի և Թոմսոնի, իրենց հեղինակությամբ արևմտյան հայագիտության վրա խորապես ազդեցին» (Ջ. Տրայինան. Մովսես Խորենացիի «դասական» ավանդությունը Հայոց պատմության Ա գրքի 5-րդ գլուխին մեջ. – ՊԲՀ, 1992, -1, էջ 28): Ի դեպ, պատմահայր Խորենացու ժամանակի և գործի վերաբերյալ Թումանյանի արտահայտած կանխակալ դրույթների ու եզրահանգումների կատարյալ սնանկությունը բացահայտել է Ա. Մուշեղյանը՝ իր «Մովսես Խորենացու դարը» (Երևան, 2007) ծանրակշիռ աշխատության մեջ: Ցավոք, մեր առաջադրած հարցի շրջանակները թույլ չեն տալիս ծավալվելու նույնատիպ ընդգրկումով: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մի շարք պատճառներով Թումանյանի ուսումնասիրություններն ավելի մատչելի, ավելի հեղինակավոր են ոչ հայ մասնագետների համար (չնայած՝ ազգությամբ հայ որոշ մասնագետների համար էլ է Թումանյանը հեղինակություն), և որ դրանք դարձել են արևմտյան պատմագիտության մեջ չափանիշ ու գրեթե միակ աղբյուրը հայոց ու վրաց ազնվականության ծագումնաբանական հարցերում, ապա, կարծում ենք՝ ժամանակն է, որպեսզի համակարգված ու հիմնավոր անդրադարձ կատարվի ամերիկյան կովկասագետի հակահայ և հակապատմագիտական տեսություններին:

<sup>99</sup> A. Bryer. People and Settlement in Anatolia and the Caucasus. Variorum Reprints, London, 1988, p. 187.

<sup>100</sup> Տե՛ս Դ. Հեյսեն. Armenia: A Historical Atlas, Chicago, 2001.

վերցնում, գրելով, թե վրաց ընդհանուր լեզվով միավորված հին և հիմնական էթնիկական խմբերից էին նաև դիաուխները (տայեցիները)<sup>101</sup>:

Ամփոփենք. չնայած Մամիկոնյան տոհմի պատմությունը բավականաչափ ուսումնասիրված է, այնուամենայնիվ, դեռևս կան հարցեր, որոնք ոչ միայն հայ և օտարազգի պատմաբանների մշտական ուշադրության կենտրոնում են՝ բնական կերպով, այլև ոմանց կողմից հաճախակի դառնում են կեղծարարությունների թեմա՝ զուտ շահադիտական նկատառումներով: Հատկապես մեր հարևան երկրների գիտական շրջանակները ներկայացնող, այսպես կոչված, որոշ հետազոտողներ, կամայական մոտեցում ցուցաբերելով Մամիկոնյանների նախահայրենիքին, ծագմանը և ազգությանը վերաբերող հարցերին՝ ամեն կերպ ջանում են յուրացնել նրանց տոհմաբանությունը, որպեսզի սեփական ինչ-ինչ գաղափարաբաղադրական հիմնախնդիրներ լուծեն: Մասնավորապես՝ թուրքերն այդ ճանապարհով փորձում են իրենց նախնիներին դարձնել բնիկ փոքրասիացի, իսկ վրացիները՝ հաստատագրել իրենց հավակնությունները պատմական Հայաստանի Տայք նահանգի նկատմամբ: Արդ, ուրեմն, կարիք կա շարունակելու առավել համակողմանի ուսումնասիրությունները թե՛ հայ իրականության մեջ այդ նշանավոր տոհմի պատմական ոչ միանշանակ առաքելությանը հնարավորինս անաչառ գնահատական տալու, թե՛ այլնայլ ազատ մեկնաբանություններն ու կեղծարարությունները կանխելու նպատակով:

## КЕМ ЯВЛЯЮТСЯ И ОТКУДА ПРИШЛИ ПЕРВЫЕ МАМИКОНЯНЫ?

### ГАМЛЕТ ДАВТЯН

#### Резюме

Хотя история рода Мамиконянов достаточно изучена, тем не менее, есть еще вопросы, которые не только находятся в центре постоянного внимания армянских и иностранных историков, но и часто становятся темой фальсификации в чисто корыстных целях. Особенно некоторые так называемые исследователи, представляющие научные сообщества наших соседних стран, проявляя своевольный подход к вопросам о прародине Мамиконянов, их происхождении и национальной принадлежности, всячески пытаются присвоить их родословную и оторвать последних от армянской действительности, чтобы решить свои политические и мировоззренческие задачи. В частности, турки таким путем стараются превратить своих предков в коренных малоазиатов, а грузины – зафиксировать свои притязания в исторической провинции Тайк Армении.

<sup>101</sup> Д. Л а н г. Грузины. Хранители святынь. М., 2008, с. 82–83.

---

WHO ARE AND FROM WHERE HAVE THE FIRST  
MAMIKONYANS COME?

HAMLET DAVTYAN

S u m m a r y

Though the history of the Mamikonyan dynasty has been sufficiently studied, however, there are issues which are in the focus of permanent attention of Armenian and foreign historians in a natural way, for others it has become an insincere subject just for mercenary motives. Especially the so called scientific researchers from our neighbouring countries, by showing willful attitude towards the Mamikonyan homeland, their origin and nationality, try to assimilate their genealogy and exclude them from Armenian roots for solving some ideological and political issues. Particularly, in that way the Turkish try to make their ancestors be native Asia Minors, and the Georgians fix their ambitions towards the historical Taik province of Armenia.